## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12 -Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի 2019 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 69–Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի ֆինանսական ռեսուրսները խնայելու և համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 352-Ա հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. *Կրճատել* համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնը (պաշտոնի ծածկագիր՝ 2.3-1):

Փոփոխության արդյունքում համայնքի ֆինանսական ռեսուրսները տարեկան ***կխնայվեն 1.860.000 դրամի չափով*** (դրույքաչափ՝ 155.000 x 12 = 1.860.000 ):

2. *Կրճատել* Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնը (պաշտոնի ծածկագիր՝ 2.3.3):

Փոփոխության արդյունքում համայնքի ֆինանսական ռեսուրսները տարեկան ***կխնայվեն 1.860.000 դրամի չափով*** (դրույքաչափ՝ 155.000 x 12 = 1.860.000):

3. *Կրճատել* համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի պաշտոնը (պաշտոնի ծածկագիր՝ 3.3-2):

Փոփոխության արդյունքում համայնքի ֆինանսական ռեսուրսները տարեկան ***կտնտեսվեն 1.320.000 դրամի չափով*** (դրույքաչափ՝ 110000 x 12 = 1.320.000 ):

4. *Լրացնել* համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետի պաշտոն:

Փոփոխության արդյունքում համայնքի ֆինանսական ռեսուրսները տարեկան ***կավելանան 1.680.000*** դրամի չափով (դրույքաչափ՝ 140.000 x 12 = 1.680.000 ):

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 69-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նոր հաստիքացուցակի համաձայն համայնքի 2019 թվականի բյուջեում համայնքային ծառայողների դրույքաչափերի գծով ծախսերը կկրճատվեն 3.360.000 ՀՀ դրամի չափով (-1.860.000-1.860.000-1.320.000+1.680.000):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ